



Հարցեր

Պատասխաններ

1 Որո՞նք են պայմանաճանաչման նկատմամբ պահանջները:

Կալիֆորնիայի մեքենաների ցածրարժեք ապահովագրության ծրագրի կամ CLCA-ի համար պայմանաճանաչման լինելու համար շահառուները պետք է:
• Ունենան Կալիֆորնիայում վավեր վարորդական իրավունքների վկայական
• Լինեն \$25,000 կամ պակաս արժեքով փոխադրամիջոցի սեփականատեր
• Համապատասխանեն եկամտի առումով պայմանաճանաչման ուղեկիշներին
• Լինեն առնվազն 16 տարեկան

2 Որո՞նք են եկամտի նկատմամբ պահանջները:

Տնային տնտեսության չափսից ելնելով՝ սրանք հասույթի առավելագույն մակարդակներն են իրավունակ հանաչվելու համար:
• 1 անձ՝ \$30,350
• 2 անձ՝ \$41,150
• 3 անձ՝ \$51,950
• 4 անձ՝ \$62,750

«Ընտանիքի» սահմանումը՝ դաշնային կամ նահանգային հարկային ձևի վրա թվարկված բոլոր անձինք:

3 Դիմելուց առաջ ես պետք է ապացուցե՞մ իմ եկամուտների գոյությունը:

Այո: Ծրագիրն ընդունում է հետևյալ փաստաթղթերից ցանկացած մեկը որպես ընտանիքի եկամտի ապացույց:

Table with 2 columns: ԾՐԱԳԻՐ (Program) and ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՒՆՂԹ (Required Documents). Rows include CalFresh, CalWorks, California LifeLine, LIHEAP, Medi-Cal, EDD, SSI, and TANF.

4 Ինչպիսի՞ ծածկույթ է տրամադրում Կալիֆորնիայի մեքենաների ցածրարժեք ապահովագրության ծրագիրը:

Ծրագիրը տրամադրում է մատչելի, միայն պատասխանատվությունն ապահովագրող ավտոմեքենայի ապահովագրություն, որը համապատասխանում է նահանգի՝ ֆինանսական պատասխանատվության մասին օրենքներին:

Պատասխանատվության տարրական ապահովագրության սահմանները հետևյալն են:
• \$10,000 մեկ անձի համար՝ մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում,
• \$20,000 մեկ պատահարի համար՝ մարմնական վնասվածքի կամ մահվան դեպքում,
• \$3,000 սեփականության վնասվածքի համար պատասխանատվություն՝ մեկ պատահարի համար:

Տարեկան \$19-\$68 լրացուցիչ վճարի դիմաց շահառուները կարող են ավելացնել՝
• \$1,000 բժշկական վճարներ մեկ անձի համար
• \$10,000՝ չապահովագրված վարորդի մարմնական վնասվածքի դեպքում՝ մեկ անձի համար
• \$20,000՝ չապահովագրված վարորդի մարմնական վնասվածքի դեպքում՝ մեկ պատահարի համար
Ծրագիրը չի առաջարկում համապարփակ կամ բախման

Ծրագիրը չի առաջարկում համապարփակ կամ բախման դեպքում տրվող ծածկույթ (ծածկույթ, որով պատահարից հետո վերանորոգվում է վարորդի փոխադրամիջոցը), սակայն այս ծածկույթը կարելի է գնել ապահովագրական գործակալից:



## Հարցեր

## Պատասխաններ

5

Որո՞նք են **CLCA** ապահովագրության ծախսերը:

Կալիֆորնիայում տարեկան ապահովագրավճարները տատանվում են վարչաշրջանից վարչաշրջան \$247-ից մինչև \$980-ը: Գոյություն ունեն գեղջեր, եթե վարորդը վարորդական իրավունք ունի և վարում է երեք տարի՝ լավ վարորդական պատմությամբ:

Լավ վարորդական պատմությունն է.

- Ոչ ավել, քան սեփական մեղքով տեղի ունեցած՝ միայն գույքի վնասվածք ներգրավող մեկ պատահար կամ ոչ ավել քան միայն մեկ միավոր երթևեկության կանտոնների խախտման համար՝ վերջին երեք տարվա մեջ,
- Մարմնական վնասվածքով կամ մահվամբ՝ այլ անձանց մեղքով տեղի ունեցած պատահարներ վերջին երեք տարվա ընթացքում
- Ճանապարհային երթևեկության Օրենսգրքի խախտման առումով հանցագործության կամ իրավախախտման ոչ մի դատապարտում ավտոմեքենան վարելու պատմության մեջ:

Ըստ քառնթի-ի գները ստուգելու կամ վճարման\* ժամանակացույցը ստուգելու համար՝ խնդրում ենք այցելել **mylowcostauto.com** կայքէջը:

\***CLCA**-ն առաջարկում է վճարման երկու տարբերակ՝

- Ամբողջական վճարում ԿԱՄ
- 20% պակաս՝ 7 ապառիկ վճարումներով (Յուրաքանչյուր ապառիկ վճարման համար գանձվում է \$4.00 գործառնության վճար:)

6

Ինչպե՞ս դիմել ծրագրին:

Կալիֆորնիայի մեքենաների ցածրարժեք ապահովագրության ծրագրին դիմելու համար կատարեք այս 2 քայլերը.

- 1 Լրացրեք պայմանականության վերաբերյալ հարցաթերթիկը,
- 2 Այնուհետև ավարտեք դիմումի լրացման գործընթացը
  - Այժմ 100% ԿԱՄ Հանդիպե՛ք տեղական գործակալին՝ անվճար

Խնդրում ենք այցելել [mylowcostauto.com](http://mylowcostauto.com) կայքէջը և սեղմել Act Now կոճակը՝ գործընթացը սկսելու համար: Եթե հասանելիություն չունեք համացանցին կամ լրացուցիչ օգնության կարիք ունեք, զանգահարեք 1-866-602-8861:

7

Որո՞նք են ավտոմեքենայի ապահովագրություն չունենալու համար պատժամիջոցները:

Ավտոմեքենայի ապահովագրություն չունենալու դեպքում պատժամիջոցների վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար, խնդրում ենք այցելել Կալիֆորնիայի DMV կայքը՝ <http://chilp.it/9a5b9c2> էջում (տվյալ URL հասցեն Ձեզ անմիջապես կտանի VC Section 16029 դիտելու համար):

8

Քանի՞ մեքենա կարող է ընդգրկվախձ լինել **CLCA** ապահովագրությունում:

Ըստ ծրագրի ուղեցույցների յուրաքանչյուր պայմանական շահառուին թույլատրվում է ունենալ մինչև երկու ցածրարժեք ապահովագրություն: Եթե ընտանիքում կա երկու պայմանական շահառու, ապա յուրաքանչյուրը կարող է ունենալ մինչև երկու ապահովագրություն՝ ընտանիքի հաշվարկով առավելագույնը մինչև չորսը:

Օրինակ, այս ծրագրով մեկ անհատը կարող է ունենալ առավելագույնը երկու փոխադրամիջոց և ընտանեկան զուգը կարող է ունենալ առավելագույնը չորս փոխադրամիջոց՝ փոխադրամիջոցներից յուրաքանչյուրը համապատասխանաբար նրանց անվամբ գրանցված լինելու դեպքում:

9

Ինչու՞ ընտանիքի բոլոր փոխադրամիջոցները պետք է ընդգրկվեն **CLCA**-ում:

Ծրագրով պահանջվում է, որ ընտանիքի բոլոր փոխադրամիջոցները ապահովագրվեն ծրագրի շրջանակներում: Հետևաբար մեկ մեքենայի առումով ծրագրին պայմանական լինելու համար շահառուները պետք է չունենան ընտանիքին պատկանող այլ փոխադրամիջոցների համար՝ պատասխանատվության ծածկույթով այլ ապահովագրություն:

«Ընտանիքի» սահմանումը՝ դաշնային կամ նահանգային հարկային ձևի վրա թվարկված բոլոր անձինք:

10

Կարո՞ղ եմ **CLCA** ապահովագրությամբ ծածկույթ ստանալ, եթե ունեմ փոխադրամիջոցի վարկ:

Այո, սակայն դուք պետք է ձեր վարկատուի հետ ճշտում կատարեք՝ պարզելու համար արդյոք ծրագրով ապահովվող ծածկույթի սահմանաչափերը համապատասխանում են ձեր վարկի պահանջներին: